ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

---

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 253 N**

**« 17 » ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թ.**

# ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 19-րդ հոդվածով, <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> օրենքի 15-րդ հոդվածի ա), դ) և զ) կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի թիվ 46-Ն որոշման 2-րդ հավելվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2024 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 399-Ա որոշմամբ հաստատված <<Վայոց ձորի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2025 թվականի հիմնական միջոցառումների>> պլանի ՀՀ Վայոց ձորի մարզում անցկացվող միջոցառումների 2-րդ ենթակետի 2.1 կետի պահանջներով

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝**

**1.** Հաստատել «Որոնողափրկարարական և անհետաձգելի վերականգնողական աշխատանքների իրականացումը Հերիերի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում» թեմայով շտաբային ուսումնավարժության փաստաթղթերը՝

1) Շտաբային ուսումնավարժության օրացուցային պլանը՝ համաձայն N1 հավելվածի,

2) Շտաբային ուսումնավարժության քարտեզը՝ համաձայն N2 հավելվածի,

3) Շտաբային ուսումնավարժության մտահղացման բացատրագիրը՝ համաձայն N3 հավելվածի,

4)Շտաբային ուսումնավարժության նախապատրաստման իրավիճակի զարգացման պլանը՝
համաձայն N4 հավելվածի,

5) Շտաբային ուսումնավարժության անցկացման պլանը համաձայն՝ N5 հավելվածի,

6) Շտաբային ուսումնավարժության ղեկավարման կազմակերպման սխեման՝ համաձայն N6 հավելվածի:

2. Ուսումնավարժության ղեկավարի պաշտոնը վերապահում եմ ինձ:

3. Նշանակել՝

1) ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ ՀՀ ՆԳՆ Փրկարար ծառայության Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության (այսուհետ ՄՓՎ) պետ փ/ծ գնդապետ Հ. Սարգսյանին:

4. Ստեղծել ուսումնավարժության ղեկավարման շտաբ հետևյալ կազմով.

1) Նախապատրաստման և խաղարկման խումբ.

ա. խմբի ղեկավար, ՄՓՎ բնակչության պաշտպանության բաժնի պետ, փ/ծ փոխգնդապետ Վ. Գրիգորյան,

բ. խմբի անդամ, ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ, փ/ծ լեյտենանտ Է. Սարգսյան,

գ. խմբի անդամ, Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի օպերատիվ հերթապահ հերթափոխի ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր Ն. Մկրտչյան:

2) Վերլուծության խումբ.

ա. խմբի ղեկավար, Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր Ա. Մուրադյան,

ա. խմբի անդամ, ՄՓՎ օպերատիվ հերթապահ հերթափոխի ավագ հրահանգիչ, փ/ծ լեյտենանտ Ժ. Սարգսյան,

բ. խմբի անդամ, Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ, փ/ծ մայոր Տ. Սահակյան:

5. ՈՒսումնավարժությանը ներգրավել.

1) Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի համապատասխան ծառայություններին,

2) ՄՓՎ-ին,

3) ՀՀ Վայոց մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովին

4) ՀՀ Վայոց ձորի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովին,

6) Վայք քաղաքի, Մալիշկա, Ագարակաձոր, Արփի և Արենի բնակավայրերի ղեկավար կազմին:

6.Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ, ՄՓՎ պետ, փ/ծ գնդապետ Հ. Սարգսյանին՝

1) ապահովել անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև 2025 թվականի հոկտեմբերի 12-ը ներկայացնել իմ հաստատմանը,

2) կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավվող պաշտոնատար անձանց նախապատրաստումը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի,

3) ապահովել համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ ուսումնավարժության անցկացման հարցերում (ազդարարում և այլն),

4) ճշգրտել համայնքների և կազմակերպությունների կողմից հատկացվող ուժերն ու միջոցները և դրանց օգտագործման կարգը,

5) համայնքների ղեկավարների և բնակավայրերի վարչական ղեկավարների հետ ուսումնասիրել հավանական իրավիճակը,

6) ուսումնավարժությանը պատրաստ լինելու մասին զեկուցել 2025 թվականի հոկտեմբերի 20-ին:

7. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1)ուսումնավարժության նախապատրաստման հարցերով համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ,

2) ճշգրտել համապատասխան պլանները,

3)պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարված միջոցառումների մասին:

8. Ջրածածկման վտանգի տակ գտնվող համայնքների ղեկավարներին՝

Ճշգրտել ջրածածկման գոտիներում գտնվող կազմակերպությունների, շենքերի, շինությունների ցուցակները, բնակչության, աշխատողների և սովորողների թվաքանակը:

9. Սույն որոշումը տրամադրել ուսումնավարժության մասնակիցներին:

10. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

**Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ**

**ք.Եղեգնաձոր**

**ՈՐՈՇՈՒՄ N-1**

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

23.10.2025թ.
ք. Եղեգնաձոր

Ըստ Հերիերի ջրամբարի օպերատիվ հերթապահությունից ստացված տեղեկատվության, ջրամբարի պատվարի վրա առաջացել են ճաքեր, և առկա է ջրամբարի պատվարի փլուզման վտանգ:

Ջրամբարի պատվարի փլուզումը կանխելու կամ փլուզման դեպքում հնարավոր հետևանքները նվազեցնելու նպատակով

**Հանձնաժողովը որոշում է**

**1. Ջրածածկման վտանգավոր գոտում գտնվող Վայք, Եղեգնաձոր, Արենի համայնքների ղեկավարներին և Մալիշկա, Ագարակաձոր, Արփի բնակավայրերի վարչական ղեկավարներին՝**

- Նախազգուշացնել բնակավայրերի ողջ բնակչությանը հնարավոր աղետի մասին, բացատրական աշխատանքներ տանել բնակչության շրջանում ազդարարման դեպքում իրենց վարվելակերպի կանոնների և վտանգավոր գոտուց տարահանվելուց հետո իրենց գործողությունների մասին,
- պատրաստ վիճակում պահել բնակավայրերի ազդարարման միջոցները և սահմանել շուրջօրյա հերթապահություն օրվա ցանկացած պահին ազդարարում իրականացնելու համար.
- նախազգուշացնող տեսանելի միջոցներով (դրոշակներ, նշաններ և այլն) գծանշել հնարավոր ջրածածկվող հատվածները,
- համալրել և պատրաստ վիճակի բերել համայնքների տարահանման մարմինները, անվտանգ գոտիներում նախապատրաստել ժամանակավոր կացարաններ անհրաժեշտության դեպքում տարահանվող բնակչությանը տեղաբաշխելու համար,
- պատրաստ վիճակի բերել համայնքներում առկա ինժեներական տեխնիկան՝ հնարավոր աղետի դեպքում փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքներում ընդգրկելու համար,
- հնարավորության սահմաններում վտանգավոր գոտիներից դուրս բերել նյութական արժեքները:

***2. ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Վայքի, Ջերմուկի, Եղեգնաձորի բաժինների պետերին***

- Նախազգուշացնել Արփա գետի ափամերձ վտանգավոր տարածքներում գտնվող սննդի օբյեկտների և կազմակերպությունների ղեկավարներին հնարավոր վտանգի մասին և առաջարկել ժամանակավորապես դադարեցնել գործունեությունը,
- կայուն ռադիոկապ ապահովել ծառայության բոլոր տրանսպորտային միջոցների հետ՝ անհրաժեշտության դեպքում աշխատակիցներին նախազգուշացնելու և հրահանգավորելու համար:

***3. Տրանսպորտի մարզային ծառայության պետին՝***

- ճշտել շրջանցող ճանապարհների վիճակը և կազմակերպել բարեկարգման աշխատանքներ անհրաժեշտության դեպքում այդ ճանապարհներով դեպի տուժած համայնքներ փրկարարական ուժերի մուտքն ապահովելու համար,

- պատրաստ վիճակի բերել ճանապարհաշինական կազմակերպություններում առկա ինժեներական տեխնիկան անհրաժեշտության դեպքում փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքներում ընդգրկելու համար:

**4. Ինժեներական և կոմունալ-տեխնիկական մարզային ծառայության պետին՝**

- անմիջապես կազմակերպել Հերիերի ջրամբարի ջրի մակարդակի իջեցման աշխատանքները,
- շուրջօրյա հսկողություն սահմանել ջրամբարի պատվարի վիճակի նկատմամբ, նկատված փոփոխությունների վերաբերյալ անմիջապես զեկուցել մարզի ԱԻ մշտական գործող հանձնաժողովի նախագահին,
- ճշտել մարզում առկա ինժեներական տեխնիկայի քանակությունը և վիճակը անհրաժեշտության դեպքում փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում ընդգրկելու համար:

***5. Բժշկական մարզային ծառայության պետին՝***

- Նախապատրաստել մարզի բուժ. հիմնարկները աղետի առաջացման դեպքում տուժածներին ընդունելու և բժշկական օգնություն ցուցաբերելու համար,
- Արենի համայնքի ղեկավարի հետ նախատեսել միջոցառումներ ջրամբարի պատվարի փլուզման դեպքում <<Արենիի ԱՊԿ>> ՓԲԸ-ն տարահանելու և գործունեությունը շարունակելու նպատակով:

**6. Էներգետիկայի մարզային ծառայության պետին՝**

- Իրականացնել անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ աղետի առաջացման դեպքում մարզի էլեկտրամատակարարման համակարգի կայուն գործունեության ապահովման ուղղությամբ:

**7. Կապի մարզային ծառայության պետին՝**

- Ստուգել հնարավոր ջրածածկման գոտիներում գտնվող բնակավայրերում առկա էլ. շչակների տեխնիկական վիճակը և ապահովել դրանց սարքինությունը,
- ճշտել հնարավոր աղետի դեպքում կապի համակարգին պատճառվող վնասները և անհրաժեշտության դեպքում նախապատրաստական աշխատանքներ տանել բջջային կապի օպերատորների հետ մարզի տարածքում կայուն հեռախոսակապի ապահովման ուղղությամբ:

**8. Առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման մարզային ծառայության պետին՝**

- Ճշտել առկա պաշարները և նախատեսել միջոցներ աղետի առաջացման դեպքում տուժած բնակչությանը սննդամթերքով և առաջին անհրաժեշտության ապրանքներով ապահովելու ուղղությամբ:

**9. Բույսերի և կենդանիների պաշտպանության մարզային ծառայության պետին՝**

- Բնակավայրերի ղեկավարների հետ իրականացնել միջոցառումներ անհրաժեշտության դեպքում վտանգավոր հատվածներից գյուղկենդանիների տարահանման և անվտանգ տարածքներում տեղաբաշխելու ուղղությամբ,
- առաջարկել ազգաբնակչությանը հնարավորության առկայության դեպքում տարահանումն իրականացնել վաղօրոք և կենդանիներին ետ վերադարձնել ջրամբարի մակարդակը մինչև անվտանգ նիշեր իջեցնելուց հետո:

**10. Կրթության, մշակույթի և սպորտի մարզային վարչության պետին**

- Վտանգավոր գոտիներում գտնվող ուսումնական հաստատությունների անձնակազմերին և աշակերտներին ներկայացնել իրավիճակը, ճշտել դեպի անվտանգ գոտիներ երեխաներին դուրս բերելու ուղիները,
- անվտանգ գոտիներում ընտրել համապատասխան պայմաններ ունեցող շենքեր և նախատեսել միջոցառումներ հնարավոր աղետից հետո կրթության շարունակականությունն ապահովելու համար:

**11. Մարզային տարահանման հանձնաժողովի նախագահին՝**
- Պատրաստ վիճակի բերել համայնքային տարահանման մարմինները,
- բնակավայրերի ղեկավարների հետ նախատեսել և պատրաստ վիճակի բերել անվտանգ տարածքներում գտնվող ժամանակավոր կացարանները՝ անհրաժեշտության դեպքում տարահանված բնակչությանը իրենց համայնքներում տեղաբաշխելու համար:

**12. ՀՀ ՆԳՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության պետին՝**
- պատրաստ վիճակում պահել մասնագիտացված փրկարարական ուժերը, ջրամբարի պատվարի փլուզման դեպքում արձագանքելու համար,
- համագործակցել ՀՀ ՊՆ կայազորի հետ անհրաժեշտության դեպքում ուժեր և միջոցներ հատկացնելու ուղղությամբ,
- օժանդակել համայնքների ղեկավարներին կանխարգելիչ միջոցառումների իրականացման ուղղությամբ,
- իրավիճակի փոփոխությունների և ձեռնարկված միջոցառումների մասին զեկուցել մարզպետին՝ մարզի ԱԻ մշտական գործող հանձնաժողովի նախագահին:

***13. ՀՀ ՆԳՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության, մարզային տարահանման հանձնաժողովի, ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Եղեգնաձորի, Վայքի և Ջերմուկի բաժինների պետերին, մարզային բոլոր ծառայությունների, ջրածածկման գոտում գտնվող բնակավայրերի և կազմակերպությունների ղեկավարներին՝***

- Ջրամբարի պատվարի փլուզման դեպքում գործել համաձայն <<Արտակարգ իրավիճակներում ՀՀ Վայոց ձորի մարզի բնակչության պաշտպանության պլանի>>,
- կազմակերպել ջրածածկման գոտիներից բնակչության, աշխատողների և սովորողների ազդարարումն ու տարահանումը անվտանգ տարածքներ,
- կազմակերպել ընդհանուր հետախուզություն և սկսել փրկարարական աշխատանքները մինչ մարզի ԱԻ հանձնաժողովի կողմից հետագա որոշումների ստացումը:

*Հանձնաժողովի նախագահ՝ մարզպետ* *Կ. Միքաելյան*

Հավելված N 1
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2025 թվականի սեպտեմբերի
«11»-ի N 2... որոշման

# ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼ Ա Ն

Շտաբային ուսումնավարժության նախապատրաստման

| Հ/Հ | Անցկացվող միջոցառումները | Անցկացման ժամկետը | Կատարողները | Նշումներ կատարման մասին |
|---|---|---|---|---|
| **1** | **2** | **3** | **4** | **5** |
| **Փաստաթղթերի մշակում** | | | | |
| 1. | Ելակետային տվյալների որոշում՝ մասնակիցների կազմ, մտահղացում, անցկացման կարգ | մինչև 26.09 | Նախապատրաստման և խաղարկման խումբ | |
| 2. | Կազմակերպման և անցկացման վերաբերյալ ուսումնավարժության ղեկավարի հրամանի մշակում | մինչև 26.09 | Նախապատրաստման և խաղարկման խումբ | |
| 3. | Օրացուցային պլանի մշակում և հաստատման ներկայացում | մինչև 26.09 | Նախապատրաստման և խաղարկման խումբ | |
| 4. | Մտահղացման բացատրագրի մշակում | մինչև 29.09 | Նախապատրաստման և խաղարկման խումբ | |
| 5. | Իրավիճակի զարգացման պլանի մշակում | մինչև 29.09 | Նախապատրաստման և խաղարկման խումբ | |
| 6. | Անցկացման պլանի մշակում | մինչև 30.09 | Նախապատրաստման և խաղարկման խումբ | |
| 7. | Ղեկավարման կազմակերպման սխեմայի մշակում | մինչև 30.09 | Նախապատրաստման և խաղարկման խումբ | |
| **Մասնակիցների նախապատրաստում** | | | | |
| 8. | ՇՈՒ կազմակերպման և անցկացման փաստաթղթերի ուսումնասիրում | մինչև 15.10 | ղեկավարման շտաբի պետ | |
| 9. | «Արտակարգ իրավիճակներում ՀՀ Վայոց ձորի մարզի բնակչության պաշտպանության պլանի» հավելվածի 1-ի՝ «Ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի և փլուզման դեպքում մարզի բնակչության պաշտպանության պլանի» ուսումնասիրում | մինչև 16.10 | մասնակիցներ | |
| 10. | «Արտակարգ Իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի ուսումնասիրում | մինչև 16.10 | մասնակիցներ | |
| 11. | «Որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպման կարգը հաստատելու մասին» որոշման ուսումնասիրում | մինչև 17.10 | մասնակիցներ | |

Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ
ՀՀ ՆԳՆ ՓԾ Վայոց ձորի ՄՓՎ պետ, փ/ծ գնդապետ Հ. Սարգսյան

Հավելված N 2
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2025 թվականի «17»-ի
N253 որոշման

# ՄՏԱՀՂԱՑՈՒՄ

## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ

Թեմա՝ Փրկարարական և անհետաձգելի վերականգնողական աշխատանքների իրականացումը Հերհերի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում

Մասնակիցներ՝
- Վայոց ձորի մարզպետի աշխատակազմ
- ԱԻ մշտական հանձնաժողով
- Բնակչության տարհանման հանձնաժողով
- Մարզային ծառայություններ
- Վայք, Մալիշկա, Ագարակաձոր, Արփի և Արենի բնակավայրեր։

### ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Աղետալի ջրածածկման գոտում են հայտնվել
- բնակելի տներ՝ Վայք քաղաքում 143 Մալիշկա բնակավայրում 34. Արփի բնակավայրում 33 և Արենի բնակավայրում 163
- օբյեկտներ

Վայք քաղաքում 45. Մալիշկա բնակավայրում 2. Արփի բնակավայրում 6. Ագարակաձոր բնակավայրում 2. Արենի բնակավայրում 5, եղեգնաձոր քաղաքում 4
380 հեկտար մշակովի հողատարածքներ
Վնասվել և շարքից դուրս են եկել
45 կմ էլեկտրական գծեր
3.1 կմ գազատար
11 ենթակայան։
Քանդվել է 16 կամուրջ։
Ջրածածկվել են միջպետական ավտոճանապարհի առանձին հատվածները մոտ 11.1 կմ երկարությամբ։

### ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Յրշեջ փրկարարական ջոկատի տեղակայման վայր
- Յրշեջ շարժական մոտոպոմպ
- Սննդի ապահովման շարժական կետ (ՍԱՇԿ)
- Ուժերի և միջոցների շարժման ուղղություն
- Բժշկական տեսակավորման կետ
- №1 Առաջին բուժօգնության ջոկատ (1, 2)
- Տուժածներին ավտոտրանսպորտի նստեցման տեղամաս




Մարզի տարածքում գտնվող հիդրոտեխնիկական կառույցներից առավել մեծ վտանգ են ներկայացնում Յերհերի և Կեչուտի ջրամբարները՝ համապատասխանաբար 26 և 24 մլն. խմ. տարողությամբ։ Կեչուտի և Յերհերի ջրամբարների պատվարների փլուզման դեպքում աղետալի ջրածածկման գոտում կհայտնվեն Վայք, Մալիշկա, Ագարակաձոր, Արփի և Արենի բնակավայրերի բնակիչներ, ինչպես նաև ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների աշխատողներ և սովորողներ։

Ուսումնավարժության շտաբի պետ
փ/ծ գնդապետ Հ. Սարգսյան

Հավելված N 3
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2025 թվականի սեպտեմբերի
«__» -ի N ___ որոշման

**Բ Ա Ց Ա Տ Ր Ա Գ Ի Ր**

ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄՏԱՀՂԱՑՄԱՆ

**Թեմա՝** Փրկարարական և անհետաձգելի վերականգնողական աշխատանքների իրականացումը Հերիերի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում:

**Ուսումնավարժության Նպատակները**

- Կատարելագործել մարզի և ներգրավված համայնքների ղեկավար կազմի ունակությունները ջրհեղեղի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպման գործում:
- Կատարելագործել փոխհամագործակցությունը կառավարման մարմինների, կազմակերպությունների և արձագանքող ուժերի միջև:
- Կատարելագործել արձագանքող ուժերի գործնական հմտությունները՝ համատեղ փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման ուղղությամբ:
- Ստուգել ՀՀ Վայոց ձորի մարզպետի կողմից 2023 թվականի դեկտեմբերի 18-ին N 290-Լ որոշմամբ հաստատված «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի բնակչության պաշտպանության պլանի» հավելվածի 1-ի՝ <<Ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի և փլուզման դեպքում մարզի բնակչության պաշտպանության պլանի>> իրատեսությունը:
- Ուսումնասիրել Վայք, Եղեգնաձոր և Արենի համայնքների աղետների ռիսկերի կառավարման պլանի իրատեսությունը:

***Ուսումնավարժության մասնակիցների կազմը***

վարչությունը, ՀՀ Վայոց մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովը, ՀՀ Վայոց ձորի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովը, ՀՀ ՆԳՆ ոստիկանության հասարակական կարգի պահպանության մարզային ծառայություն, Վայք քաղաքի, Մալիշկա, Ագարակաձոր, Արփի և Արենի բնակավայրերի ղեկավար կազմը:

***Ելակետային տվյալները՝***

Վայոց ձորի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավ-արևելքում, տարածքը կազմում է 2306 կմ$^2$:

Մարզի բնակչությունը կազմում է 60003 մարդ: Բնակչության խտությունը 1կմ$^2$ վրա կազմում է 24 մարդ:

Մարզի տարածքում գտնվում են քաղաքային՝ թվով 3 և գյուղական՝ թվով 5 համայնքներ: Բնակավայրերի թիվն է 55:

Մարզի տարածքով է անցնում Մ-2 Երևան-Երասխ-Նորավան-Տաթև-Կապան-Մեղրի-ՀՀ սահման միջպետական նշանակության ճանապարհի 76,1 կմ երկարությամբ հատվածը, որի վրա առկա են թվով 29 կամուրջներ, ինչպես նաև Հ-79 Գեղիովիտ-Քարագլուխ-/Մ-2/ նշանակության ճանապարհի 32,2 կմ երկարությամբ հատվածը՝ 10 կամուրջներով, 178.9կմ երկարությամբ հանրապետական նշանակության ճանապարհները՝ 18 կամուրջներով, 349,2կմ երկարությամբ մարզային նշանակության ճանապարհները՝ 39 կամուրջներով:

Մարզի տարածքում գտնվող հիդրոտեխնիկական կառույցներից առավել մեծ վտանգ են ներկայացնում Հերիերի և Կեչուտի ջրամբարները՝ համապատասխանաբար 26 և 24 մլն. խմ տարողունակությամբ: Հերիերի ջրամբարների պատվարների փլուզման դեպքում աղետալի ջրածածկման գոտում կհայտնվեն Վայք քաղաքի, Մալիշկա, Ագարակաձոր, Արփի և Արենի բնակավայրերի 1743 բնակիչներ, ինչպես նաև ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների աշխատողներ ու սովորողներ:

**Ստեղծված իրավիճակը**

Ըստ Հերիերի ջրամբարի օպերատիվ հերթապահությունից ստացված տեղեկատվության, ջրամբարի պատվարի վրա առաջացել են ճաքեր:

Ստեղծված իրավիճակի վերլուծումը հանգեցնում է այն համոզման, որ ջրամբարի պատվարը կարող է փլուզվել:

**I. ՓՈՒԼ** **<<Կանխարգելիչ միջոցառումների իրականացումը ջրամբարի պատվարի փլուզման վտանգի դեպքում>>**

Տևողությունը՝ աստղաբաշխական ժամանակով՝ 23.10.25թ. ժ. 08:00-12:00
օպերատիվ ժամանակով՝ 23.10.25թ. ժ. 08:00-ից 25.10.25թ. ժ. 11:00:

**Մասնակի իրավիճակը**

Առատ տեղումների հետևանքով ջրամբարի ջրի մակարդակը հասել է ամենաբարձր նիշին, աշխատանքներ են տարվում ջրի մակարդակի իջեցման ուղղությամբ: Ջրամբարի պատվարի փլուզման վտանգը մեծացել է:

**Ուսումնական հարցերը**

1. Մարզի ղեկավար կազմի ազդարարում, հավաք և խնդրադրում
2. Կանխարգելիչ միջոցառումների իրականացում:

**ՈՒսուցանվողների գործողությունները**

ՀՀ ՆԳՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության (այսուհետ ՄՓՎ) ճգնաժամային կառավարման կենտրոնն (այսուհետ ՃԿԿ) իրականացնում է Վայոց ձորի մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող և Վայոց ձորի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովների անդամների, մարզային ծառայությունների Վայք համայնքի ղեկավարի, Մալիշկայի, Ագարակաձոր, Արփի և Արենի բնակավայրերի վարչական ղեկավարների ազդարարումը:

Մասնակիցները ներկայանում են մարզպետի աշխատակազմի վարչական շենք, սկսվում է մարզի ԱԻ մշտական գործող հանձնաժողովի աշխատանքը: Ուսումնավարժության մասնակիցները ստանում են ԱԻ մշտական գործող հանձնաժողովի որոշումը հետախուզության իրականացման, մարզի բնակչության պաշտպանության համակարգի պատրաստ վիճակի բերման վերաբերյալ:

Մարզպետի աշխատակազմի, համայնքապետարանների աշխատակազմերի, ոստիկանության, մարզային փրկարարական վարչության ուժերով բնակչության շրջանում տարվում են բացատրական աշխատանքներ ստեղծված իրավիճակի, հնարավոր վտանգի և բնակչության վարվելակերպի վերաբերյալ: Ջրամբարը շահագործող կազմակերպության կողմից սկսվում են ջրամբարից ջրի մակարդակի իջեցման աշխատանքները:

Պատրաստ վիճակի են բերվում մարզային փրկարարական վարչության, ոստիկանության, մարզային ծառայությունների /կապ. էներգետիկա, գազ, ջուր/, շինարարական և ճանապարհաշինական կազմակերպությունների և համայնքների ուժերը, ինչես նաև հնարավոր ջրածածկման գոտում գտնվող ու ընդունող բնակավայրերի տարահանման մարմինները:

Հնարավորության սահմաններում վտանգավոր գոտիներից նախապես դուրս են բերվում նյութական արժեքներ՝ գյուղ. կենդանիներ, տրանսպորտային միջոցներ և այլն:

ժամը 11:30-12:00 1-ին փուլի ամփոփման ժամանակ ՇՈՒ-ի մասնակիցները ներկայացնում են զեկույցներ կատարված աշխատանքների վրաբերյալ:

**II. ՓՈՒԼ** **<< Բնակչության տարահանում, փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը ջրամբարի պատվարի փլուզման դեպքում>>:**

*Տևողությունը՝ ասփղաբաշխական ժամանակով՝ 23.10.2025թ. ժամը 12:00-ից 17:00*
*օպերափիվ ժամանակով՝ 23.10.2025թ. ժ. 10:30 –ից մինչև 25.10.2025թ. ժ. 11:00*

**Մասնակի իրավիճակը**

Հերիերի ջրամբարի պատվարը փլուզման վտանգը մեծացել է:

**Ուսումնական հարցերը**

1. Ջրածածկման գոտու համայնքների բնակչության ազդարարում, իրազեկում և տարահանման միջոցառումների իրականացում:
2. Ընդհանուր հետախուզության իրականացում:
3. Փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացում:

**Ուսուցանվողների գործողությունները**

Մարզպետի աշխատակազմի ինժեներական և կոմունալ տեխնիկական ծառայության մասնագետների կողմից մարզպետի կարգադրությամբ իրականացվում են հետախուզության աշխատանքներ: Իրականացված հետախուզության արդյունքում պարզվում է, որ ջրամբարի պատվարի փլուզման վտանգը մեծացել է: Մարզի ԱԻ մշտական գործող հանձնաժողովը որոշում է կայացնում ջրածածկման գոտիներից բնակչության և նյութական արժեքների տարահանում իրականացնելու վերաբերյալ:

Բնակավայրերում տեղադրված էլ. շչակների միջոցով իրականացվում է բնակչության ազդարարում:

Շչակային ազդարարումից անմիջապես հետո ստացիոնար և շարժական բարձրախոսների, պարեկային ծառայության ավտոմեքենաների և այլ հնարավոր միջոցներով ստեղծված իրավիճակի ու վարվելակերպի վերաբերյալ տեղեկատվություն է հաղորդվում ինչպես համայնքների, այնպես էլ Արփա գետիափամերձ տարածքներում աշխատող ու հանգստացող բնակիչներին և միջպետական ճանապարհով երթևեկող տրանսպորտային միջոցներին:

Համաձայն մարզպետի կողմից հաստատված որոշման ծավալվում են տարահանման-ընդունման հավաքակայաններ:

Վտանգավոր գոտիներում գտնվող Վայքի 734, Մալիշկայի 182, Արփիի 137, Արենիի 700 բնակիչներ տարահանվում և տեղաբաշխվում են իրենց համայնքների անվտանգ գոտիներում գտնվող ժամանակավոր կացարաններում:

**Հերիերի ջրամբարի պատվարը փլուզվել է:**

Մարզային փրկարարական վարչության ՃԿԿ-ն Հերիերի ջրամբարի հերթապահից ստանում է տեղեկատվություն ջրամբարի պատվարի փլուզման վերաբերյալ:

Ջրամբարի պատվարի փլուզման հետևանքով աղետալի ջրածածկման գոտում են հայտնվել՝

- ***Բնակելի տներ***

  Վայք քաղաքում 143, Մալիշկա բնակավայրում 34, Արփի բնակավայրում 33 և Արենի բնակավայրում 163
- Կա 3 զոհ, 8 տուժած
- ***Օբյեկտներ***

  Վայք քաղաքում 45, Մալիշկա բնակավայրում 2, Արփի բնակավայրում 6, Ագարակաձոր բնակավայրում 2, Արենի բնակավայրում 5 և Եղեգնաձոր քաղաքում 4:

  380 հեկտար մշակովի հողատարածքներ:

  Վնասվել և շարքից դուրս են եկել 45 կմ էլեկտրական գծեր, 3.1 կմ գազատար, 11 ենթակայան:

  Քանդվել է 16 կամուրջ:

  Ջրածածկվել են միջպետական ավտոճանապարհի առանձին հատվածները՝ մոտ 11.1 կմ երկարությամբ:

ՄՓՎ ՃԿԿ ՕՀՀ-ն անմիջապես իրականացնում է ՄՓՎ պետի, ՃԿԱԿ-ի, մարզպետի իրազեկում: ՄՓՎ պետի հրամանով իրականացվում է ՄՓՎ ստորաբաժանումների, ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Վայքի բաժնի, ջրածածկման գոտու համայնքների ղեկավարների, բնակավայրերի վարչական ղեկավարների, մարզի ԱԻ մշտական գործող և բնակչության տարահանման հանձնաժողովներիմ փրկարար ուժեր և միջոցներ տրամադրող համայնքների ու կազմակերպությունների իրազեկում:

Մարզային փրկարարական վարչության կողմից ջրածածկման գոտիներում կազմակերպվում է հետախուզություն, որի խնդիրներն են.

- ջրածածկման գոտու սահմանների ճշտումը,
- տուժածների գտնվելու վայրերի և դուրս բերման ուղիների ճշտումը,

- ճանապարհների առկայության և վիճակի ճշտումը,
- բնակավայրերի և տնտեսության օբյեկտների վիճակի ճշտումը,
- վթարափրկարարական աշխատանքների ծավալների ճշտումը:

Մարզային փրկարարական վարչության կողմից ջրածածկման գոտիներում զուգահեռ տարվում են փրկարարական աշխատանքներ:

ՄՓՎ ստորաբաժանումների, բուժ.հիմնարկների, ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Վայքի բաժնի, ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Վայոց ձորի մարզի գումարտակի պարեկների, քաղաքի և բնակավայրերի բնակիչների, կազմակերպությունների աշխատողների, հասարակական կազմավորումների ուժերով իրականացվում են փրկարարական աշխատանքներ, որոնք ընդգրկում են.

- ջրածածկման գոտիներում մարդկանց հայտնաբերումը, տեղափոխումը անվտանգ գոտիներ և կենսապահովման կազմակերպումը տեղաբաշխման վայրերում,
- տուժածներին առաջին բուժ.օգնության ցուցաբերումը և տեղափոխումը բուժ.հիմնարկներ,
- ջրածածկված շենքերի և շինությունների մանրազնին ստուգումը, տուժածներին հայտնաբերումը և դուրս բերումը,
- գյուղ.կենդանիների և այլ նյութական արժեքների հայտնաբերումը և դուրս բերումը, վիրավոր կենդանիների բուժումը, անկածների հորումը:

Փրկարարական աշխատանքներին զուգահեռ իրականացվում են այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից են՝

- ջրահեռացման ջրանցքների պատրաստումը և ջրահեռացման կազմակերպումը,
- փրկարար ուժերի առաջխաղացման երթուղիներում ճանապարհների և կամուրջների վերանորոգումը կամ ժամանակավոր անցումների կառուցումը,
- փրկարարական աշխատանքների տեղամասերը կապով ու էլեկտրամատակարարմամբ ապահովումը:

Անհետաձգելի աշխատանքներում ընդգրկվում են ճանապարհաշինական, շինարարական, կապի, էլեկտրամատակարարման կազմակերպությունների և համայնքների վթարատեխնիկական ուժերը:

Փրկարարական աշխատանքներին մասնակցում են՝

- փրկարար ծառայողներ մարզային փրկարարական վարչությունից,
- ծառայողներ ոստիկանությունից,

Փրկարարական աշխատանքներում ներգրավվել են նաև հրշեջ և փրկարարական մեքենաներ, էքսկավատոր, բուլդոզեր, ավտոգրեյդեր, ինքնաթափ, վերամբարձ կռունկ:

ժամը 17:00-17:30 Ուսումնավարժության արդյունքների ամփոփում և ավարտ:

Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ

ՀՀ ՆԳՆ ՓԾ Վայոց ձորի ՄՓՎ պետ, փ/ծ գնդապետ Հ. Սարգսյան

Հավելված N 4
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2025 թվականի սեպտեմբերի
«11» »-ի N 243 որոշման

# Պ Լ Ա Ն
Շտաբային ուսումնավարժության իրավիճակի զարգացման

| Միջանկյալի տրման ժամը | Միջանկյալի բովանդակությունը | Ով է հանձնում | Ում է հանձնում |
|---|---|---|---|
| **<u>I. ՓՈՒԼ</u> <<Կանխարգելիչ միջոցառումների իրականացումը ջրամբարի պատվարի փլուզման վտանգի դեպքում>>** Տևողությունը՝ աստղաբաշխական ժամանակով՝ 23.10.25թ. ժ. 08:00-13:00 օպերատիվ ժամանակով՝ 23.10.25թ. ժ. 08:00-ից 24.10.25թ. ժ. 11:00: | | | |
| ժամը $10^{30}$ | ***<u>Միջանկյալ թիվ 1</u>*** Առատ տեղումների հետևանքով տեղի է ունեցել հողի սահք, փակվել է Գետափ-Աղավնաձոր շրջանցող ավտոճանապարհի 5-րդ կմ-ի 10 մետր հատվածը: | Միջնորդի միջոցով | տրանսպորտի և հասարակական կարգի պահպանության մարզային ծառայությունների պետերին |
| ժամը $12^{30}$ | ***<u>Միջանկյալ թիվ 2</u>*** Ռինդ - Արենի ավտոճանապարհի 6-րդ կմ-ին տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար, կա 2 տուժած: | Միջնորդի միջոցով | Եղեգնաձորի ՀՓՋ հրամանատարին, բժշկական մարզային ծառայության պետին, հասարակական կարգի պահպանության մարզային ծառայության պետին |
| **<u>II. ՓՈՒԼ</u> << Բնակչության տարահանում, փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը ջրամբարի պատվարի փլուզման դեպքում>>:** *Տևողությունը՝ ասպղաբաշխական ժամանակով՝* 23.10.25թ. ժամը 14:00-ից 17:00 օպերատիվ ժամանակով՝ 23.10.25թ. ժ. $10^{30}$ –ից մինչև 25.10.2025թ. ժ. $11^{00}$: | | | |
| | | | |
| ժամը $12^{35}$ | ***<u>Միջանկյալ թիվ 3</u>*** Վայքում, Արփիում և Արենիում ջրածածկման հետևանքով վնասվել են էլեկտրահաղորդման գծեր, համայնքները հոսանքազրկվել են: | Միջնորդի միջոցով | էներգետիկայի մարզային ծառայության պետին |
| ժամը $14^{40}$ | ***<u>Միջանկյալ թիվ 4</u>*** Արփա գետի ափամերձ հատվածներում հայտնաբերվել են անկած անասուններ: | Միջնորդի միջոցով | բույսերի և կենդանիների պաշտպանության մարզային |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ծառայության պետին |
| ժամը 12:45 | ***Միջանկյալ թիվ 5*** Անհրաժեշտ է սննդամթերքով ապահովել Արենի բնակավայրի վտանգավոր հատվածից անվտանգ տարածք տեղափոխված 300 բնակիչների և փրկարարական աշխատանքներում ընդգրկված 180 անձանց: | Միջնորդի միջոցով | առևտրի, սննդի ու նյութատեխնիկական մատակարարման մարզային ծառայության պետին |
| ժամը 12:50 | ***Միջանկյալ թիվ 6*** Փրկարարական աշխատանքների ժամանակ վնասվածքներ են ստացել 8 հրշեջ փրկարար և 5 կամավոր: | Միջնորդի միջոցով | բժշկական մարզային ծառայության պետին |
| ժամը 12:55 | ***Միջանկյալ թիվ 7*** Շրջանցող Գետափ-Աղավնաձոր-Արենի ավտոճանապարհի և միջպետական ավտոճանապարհի առանձին հատվածներում առաջացել են մեքենաների խցանումներ: | Միջնորդի միջոցով | տրանսպորտի և հասարակական կարգի պահպանության մարզային ծառայությունների պետերին |

Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ

ՀՀ ՆԳՆ ՓԾ Վայոց ձորի ՄՓՎ պետ, փ/ծ գնդապետ Հ. Սարգսյան

**Հավելված N 5**
**ՀՀ Վայոց ձորի մարզպետի**
**2025 թվականի սեպտեմբերի**
**«17»-ի N 253 որոշման**

**Ա Ն Ց Կ Ա Ց Մ Ա Ն  Պ Լ Ա Ն**
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ
ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ

**Թեմա**
«Փրկարարական և անհետաձգելի վերականգնողական աշխատանքների իրականացումը Հերհերի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում»

**Ուսումնական նպատակները**.

- Կատարելագործել մարզի և ներգրավված համայնքների ղեկավար կազմի ունակությունները ջրհեղեղի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպման գործում:
- Կատարելագործել փոխհամագործակցությունը կառավարման մարմինների, կազմակերպությունների և արձագանքող ուժերի միջև:
- Կատարելագործել արձագանքող ուժերի գործնական հմտությունները՝ համատեղ փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման ուղղությամբ:
- Ստուգել ՀՀ Վայոց ձորի մարզպետի կողմից 2023 թվականի դեկտեմբերի 18-ին N 290-Լ որոշմամբ հաստատված «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի բնակչության պաշտպանության պլանի» հավելվածի 1-ի՝ <<Ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի և փլուզման դեպքում մարզի բնակչության պաշտպանության պլանի>> իրատեսությունը:
- Ուսումնասիրել Վայք, Եղեգնաձոր և Արենի համայնքների աղետների ռիսկերի կառավարման պլանի իրատեսությունը:

**Ուսումնավարժության մասնակիցները**
Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի համապատասխան ծառայությունները, ՀՀ ՆԳՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչությունը, ՀՀ Վայոց մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովը, ՀՀ Վայոց ձորի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովը, ՀՀ ՆԳՆ ոստիկանության հասարակական կարգի պահպանության մարզային ծառայություն, Վայք քաղաքի, Մալիշկա, Ագարակաձոր, Արփի և Արենի բնակավայրերի ղեկավար կազմը:

**Ուսումնավարժության անցկացման ժամանակը**

Աստղաբաշխական ժամանակը 23.10.25թ. ժամը 08:00-ից ժ. 17:30
Օպերատիվ ժամանակը 23.10.25թ. ժամը 08:00 -ից 25.10.25թ ժ.11:00

**Ուսումնավարժության անցկացման վայրը՝**
Վայոց ձորի մարզպետի աշխատակազմ, ք. Եղեգնաձոր, Շահումյան 5:

## ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

| ԺԱՄԿԵՏԸ | | Ուսումնական հարցեր | Ստեղծված իրավիճակը | Ուսուցանվողների գործողությունները | ՇՈՒ ղեկավարի գործողությունները | Միջնորդների գործողություն ները |
|---|---|---|---|---|---|---|
| Օպե րա տիվ | Աստղա բաշխա կան | | | | | |
| **1.** | **2.** | **3.** | **4.** | **5.** | **6.** | |
| **I. ՓՈՒԼ** <<Կանխարգելիչ միջոցառումների իրականացումը ջրամբարի պատվարի փլուզման վտանգի դեպքում>><br>Տևողությունը՝ աստղաբաշխական ժամանակով՝ 23.10.25թ. ժ. 08:00-12:00<br>օպերատիվ ժամանակով՝ 23.10.25թ. ժ. 08:00-ից 25.10.25թ. ժ. 11:00: | | | | | | |
| 23.10 ժամը $08^{00}$ - $09^{30}$<br><br>ժամը $09^{30}$ - $10^{00}$ | ժամը $08^{00}$ - $09^{30}$<br><br>ժամը $09^{30}$ - $10^{00}$ | Մարզի ղեկավար կազմի ազդարարում, հավաք և խնդրադրում: | Ըստ Հերհերի ջրամբարի օպերատիվ հերթապահությունից ստացված տեղեկատվության, ջրամբարի պատվարի վրա առաջացել են ճաքեր: Ստեղծված իրավիճակի վերլուծումը հանգեցնում է այն համոզման, որ առաջացել է ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիք: | ՀՀ ՆԳՆ Փրկարար ծառայության Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության (այսուհետ ՄՓՎ) ճգնաժամային կառավարման կենտրոնն (այսուհետ ՃԿԿ) իրականացնում է Վայոց ձորի մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող և Վայոց ձորի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովների անդամների, մարզային ծառայությունների, Վայք համայնքի ղեկավարի, Մալիշկա, Ագարակաձոր, Արփի և Արենի բնակավայրերի վարչական ղեկավարների ազդարարումը:<br><br>Մասնակիցները ներկայանում են մարզպետի աշխատակազմի վարչական շենք, սկսվում է մարզի ԱԻ մշտական գործող հանձնաժողովի աշխատանքը: Ուսումնավարժության մասնակիցները ստանում են ԱԻ մշտական գործող հանձնաժողովի որոշումը հետախուզություն իրականացնելու վերաբերյալ: | Մարզային փրկարարական վարչության պետին տալիս է ուսումնավարժությա ն մասնակիցների ազդարարման և հավաքի հրաման:<br><br>Ղեկավարում է մարզի ԱԻ հանձնաժողովի աշխատանքները: | Մասնակցում են խորհրդակցությ անը: |
| 23.10 | ժամը | Կանխարգելիչ | | Մարզպետի աշխատակազմի, | Հետևում է | Հսկում և |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ժամը $10^{00}$- մինչև 24.10 ժ.$10^{00}$ | $10^{00}$ $11^{30}$ | միջոցառումների իրականացում: | Իրավիճակը նույնն է: | համայնքապետարանների աշխատակազմերի, ոստիկանության, մարզային փրկարարական վարչության ուժերով բնակչության շրջանում տարվում են բացատրական աշխատանքներ ստեղծված իրավիճակի, հնարավոր վտանգի և բնակչության վարվելակերպի վերաբերյալ: Ջրամբարը շահագործող կազմակերպության կողմից սկսվում են ջրամբարից ջրի մակարդակի իջեցման աշխատանքները: Պատրաստ վիճակի են բերվում մարզային փրկարարական վարչության, ոստիկանության, մարզային ծառայությունների /կապ, էներգետիկա, գազ, ջուր/, շինարարական և ճանապարհաշինական կազմակերպությունների և համայնքների ուժերը, ինչպես նաև հնարավոր ջրածածկման գոտում գտնվող ու ընդունող բնակավայրերի տարահանման մարմինները: | մասնակիցների գործողություններին | օգնություն են ցուցաբերում ուսումնավարժության մասնակիցներին |
| | ժամը $10^{00}$ - $11^{30}$ | | Իրավիճակի զարգացում ըստ միջանկյալներ 1-2 | Իրականացվում են միջոցառումներ ըստ միջանկյալներ 1-2-ի: | | Մասնակիցներին են փոխանցում միջանկյալները: |
| 23.10 ժ.$10^{00}$ -$10^{30}$ | ժամը $11^{30}$ - $12^{00}$ | Ուսումնավարժության առաջին փուլի ամփոփում: | Իրավիճակը մնում է անփոփոխ | Զեկուցում են իրականացված միջոցառումների մասին: | ՈՒՆկնդրում է մասնակիցների զեկույցները: | Մասնակցում են հավաքին: |
| | **<u>II. ՓՈՒԼ</u> <<Բնակչության տարահանում, փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը ջրամբարի պատվարի փլուզման դեպքում>>:** *Տևողությունը՝ աստղաբաշխական ժամանակով՝* 23.10.2025թ. ժամը 12:00-ից 17:00 *օպերատիվ ժամանակով՝* 23.10.2025թ. ժ. $10^{30}$ –ից մինչև 25.10.2025թ. ժ. $11^{00}$: | | | | | |
| 23.10 ժամը $10^{30}$- մինչև ժ.$16^{30}$ | ժամը $12^{00}$ - $13^{00}$ | Ջրածածկման դեպքում վտանգի տակ գտնվող համայնքների բնակչության ազդարարում, իրազեկում և | Հերհերի ջրամբարի պատվարի փլուզման վտանգը մեծացել է: | Մարզպետի աշխատակազմի ինժեներական և կոմունալ տեխնիկական ծառայության մասնագետների կողմից մարզպետի կարգադրությամբ իրականացվում են հետախուզության աշխատանքներ: Հետախուզության արդյունքում պարզվում է, որ ջրամբարի պատվարի փլուզման վտանգը մեծացել է: Մարզի ԱԻ մշտական գործող | Տալիս է կարգադրություն Վայք քաղաքի, Մալիշկա, Ազարակաձոր, Արփի և Արենի բնակավայրերի ջրածածկման գոտիներում գտնվող | Հսկում և օգնություն են ցուցաբերում ուսումնավարժության մասնակիցներին միջոցառումների կազմակերպման |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | տարահանման միջոցառումների իրականացում: | | հանձնաժողովը որոշում է կայացնում ջրածածկման գոտիներից բնակչության և նյութական արժեքների տարահանում իրականացնելու վերաբերյալ: Բնակավայրերում տեղադրված էլ. շչակների միջոցով իրականացվում է բնակչության ազդարարում: Շչակային ազդարարումից անմիջապես հետո ստացիոնար և շարժական բարձրախոսների, պարեկային ծառայության ավտոմեքենաների և այլ հնարավոր միջոցներով ստեղծված իրավիճակի ու վարվելակերպի վերաբերյալ տեղեկատվություն է հաղորդվում ինչպես համայնքների, այնպես էլ Արփա գետի ափամերձ տարածքներում աշխատող ու հանգստացող բնակիչներին և միջպետական ճանապարհով երթևեկող տրանսպորտային միջոցներին: Համաձայն մարզպետի կողմից հաստատված որոշման ծավալվում են տարահանման-ընդունման հավաքակայաններ: Վտանգավոր գոտիներում գտնվող Վայքի 734, Մալիշկայի 182, Արփիի 137, Արենիի 700 բնակիչներ տարահանվում և տեղաբաշխվում են իրենց համայնքների անվտանգ գոտիներում գտնվող ժամանակավոր կացարաններում: | բնակչության տարահանման վերաբերյալ: | և իրականացման գործում: |
| | ժամը $13^{00}$ - $14^{00}$ | ընդմիջում | | | | |
| 23.10 ժամը ժ.$16^{30}$ մինչև ժ.$18^{00}$ | ժամը $14^{00}$ - $14^{30}$ | Ընդհանուր հետախուզու թյան իրականացում: | Հերիերի ջրամբարի պատվարը փլուզվել է: Ջրամբարի պատվարի փլուզման հետևանքով աղետալի ջրածածկման գոտում են հայտնվել. | ՄՓՎ ՃԿԿ օպերատիվ հերթապահ հերթափոխը Հերիերի ջրամբարի հերթապահից ստանում է տեղեկատվություն ջրամբարի պատվարի փլուզման վերաբերյալ: ՄՓՎ ՃԿԿ ՕՀՀ–ն անմիջապես իրականացնում է ՄՓՎ պետի, ՃԿԱԿ-ի, մարզպետի իրազեկում: ՄՓՎ պետի | Տալիս է կարգադրություն ընդհանուր հետախուզություն իրականացնելու վերաբերյալ | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | - ***Բնակելի փներ***<br>Վայք քաղաքում 143, Մալիշկա բնակավայրում 34, Արփի բնակավայրում 33 և Արենի բնակավայրում 163<br>- Կա 3 զոհ, 8 տուժած<br>- ***Օբյեկտներ***<br>Վայք քաղաքում 45, Մալիշկա բնակավայրում 2, Արփի բնակավայրում 6, Ագարակաձոր բնակավայրում 2, Եղեգնաձոր քաղաքում 4 և Արենի բնակավայրում 5:<br>380 հեկտար **մշակովի հողատարածք:**<br>Վնասվել և շարքից դուրս են եկել 45 կմ էլեկտրական գծեր, 3.1 կմ գազատար, 11 ենթակայան: Քանդվել է 16 **կամուրջ**:<br>Ջրածածկվել են միջպետական ավտոճանապարհի առանձին հատվածները՝ մոտ **11.1 կմ** երկարությամբ: | հրամանով իրականացվում է ՄՓՎ ստորաբաժանումների, ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Վայքի բաժնի, ջրածածկման գոտու համայնքների ղեկավարների, մարզի ԱԻ մշտական գործող և բնակչության տարահանման հանձնաժողովների, փրկարար ուժեր և միջոցներ տրամադրող համայնքների ու կազմակերպությունների իրազեկում:<br>Մարզային փրկարարական վարչության կողմից ջրածածկման գոտիներում կազմակերպվում է հետախուզություն, որի խնդիրներն են.<br>- ջրածածկման գոտու սահմանների ճշտումը,<br>- տուժածների գտնվելու վայրերի և դուրս բերման ուղիների ճշտումը,<br>- ճանապարհների առկայության և վիճակի ճշտումը,<br>- բնակավայրերի և տնտեսության օբյեկտների վիճակի ճշտումը,<br>- վթարափրկարարական աշխատանքների ծավալների ճշտումը:<br>Մարզային փրկարարական վարչության կողմից ջրածածկման գոտիներում զուգահեռ տարվում են փրկարարական աշխատանքներ: | | |
| 23.10 ժամը ժ.18$^{00}$ մինչև 25.10 ժ.11$^{00}$ | ժամը 14$^{30}$ - 15$^{30}$ | Փրկարարական և անհետաձգելի վթարավերա կանգնողական աշխատանքների իրականացում: | Իրավիճակը մնում է | ՄՓՎ ստորաբաժանումների, բուժ.հիմնարկների, ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Վայքի բաժնի, ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Վայոց ձորի մարզի | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | անփոփոխ: | գումարտակի պարեկների, բնակավայրերի բնակիչների, կազմակերպությունների աշխատողների, հասարակական կազմավորումների ուժերով իրականացվում են փրկարարական աշխատանքներ, որոնք ընդգրկում են.<br>- ջրածածկման գոտիներում մարդկանց հայտնաբերումը, տեղափոխումը անվտանգ գոտիներ և կենսապահովման կազմակերպումը տեղաբաշխման վայրերում,<br>- տուժածներին առաջին բուժ.օգնության ցուցաբերումը և տեղափոխումը բուժ.հիմնարկներ,<br>- ջրածածկված շենքերի և շինությունների մանրազնին ստուգումը, տուժածներին հայտնաբերումը և դուրս բերումը,<br>- գյուղ.կենդանիների և այլ նյութական արժեքների հայտնաբերումը և դուրս բերումը, վիրավոր կենդանիների բուժումը, անկածների հորումը:<br>Փրկարարական աշխատանքներին զուգահեռ իրականացվում են այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից են՝<br>- ջրահեռացման ջրանցքների պատրաստումը և ջրահեռացման կազմակերպումը,<br>- փրկարար ուժերի առաջխաղացման երթուղիներում ճանապարհների և կամուրջների վերանորոգումը կամ ժամանակավոր անցումների կառուցումը,<br>- փրկարարական աշխատանքների տեղամասերը կապով ու էլեկտրամատակարարմամբ ապահովումը:<br>Փրկարարական աշխատանքներին մասնակցում են՝ | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | - փրկարար ծառայողներ մարզային փրկարարական վարչությունից,<br>- ծառայողներ–ոստիկանությունից,<br>Փրկարարական աշխատանքներում ներգրավվել են նաև հրշեջ և փրկարարական մեքենաներ, էքսկավատոր, բուլդոզեր, ավտոգրեյդեր, ինքնաթափ, վերամբարձ կռունկ: | | |
| | ժամը $12^{00}$ - $17^{00}$ | | Իրավիճակի զարգացում ըստ միջանկյալներ 3-7: | Իրականացվում են միջոցառումներ ըստ միջանկյալներ 3-7-ի: | | Մասնակիցնե րին են փոխանցում միջանկյալները: |
| | ժամը 17:00-17:30 | Ուսումնավարժության 2-րդ փուլի ավարտ | Ուսումնավարժության 2-րդ փուլի ամփոփում | | | |
| | 17:30 | Ուսումնավարժության ավարտ | | | Հայտարարում է ուսումնավարժության ավարտ: | |

Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ

ՀՀ ՆԳՆ ՓԾ Վայոց ձորի ՄՓՎ պետ, փ/ծ գնդապետ Հ. Սարգսյան

Հավելված N 6

ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2025 թվականի սեպտեմբերի
«  »-ի N 253 որոշման

# Ս Խ Ե Մ Ա
## Ուսումնավարժության ղեկավարման կազմակերպման




Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ

ՀՀ ՆԳՆ ՓԾ Վայոց ձորի ՄՓՎ պետ, փ/ծ գնդապետ Հ. Սարգսյան